ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Հ Ր Ա Մ Ա Ն

21 հունվարի 2025 թվական N 3-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ աշխատանքային գնահատման և կատարողականների հիման վրա պարգևատրման կարգը ծրագրերի մուտքագրման, հաստատման, այդ համակարգով կատարողականների հաստատելու մասին» N 1510-Ն որոշման 13-րդ կետը և ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 730-Լ որոշման հավելվածի 20-րդ կետի 7-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 2025 թվականի աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի։

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների պետերին՝ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի աշխատանքները կազմակերպել և իրականացնել՝ առաջնորդվելով սույն հրամանի 1-ին կետով հաստատված աշխատանքային ծրագրով։

X

ԳԱՐԵԳԻՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN GAREGIN 3412870455

քաղաք Երևան